ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
МУСАЛЕР

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILLAGE HALL OF MUSALER

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

23.12.2015թ.
թիվ 263

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան.

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ պետական իրավական փորձաքննության համար Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 4-ի N 79-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N85-Ն որոշումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ ...2... թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» դեկտեմբերի 2015 թվականի N 85-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N 79-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի կողմից 2016 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 79-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) Որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետում նշված «100» թիվը փոխարինել «50» թվով:
   2) Որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
      «ա) ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների անձինք ազատվում են աղբահանության վճարից»:
   3) Որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետում նշված «հինգ հարյուր» բառերը փոխարինել «երկու հարյուր հիսուն» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

	ԿՈՂՄ (7)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ			
ԽԱՉԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ			
ՀԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ			

ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱՋՅԱՆ	----------	----------	----------
ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ	----------	----------	----------
ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ	----------	----------	----------
ԱԲՐԱՀԱՄ ՖԱՐՖԱՐՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ